# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

# ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31 –Ի ՆԻՍՏԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2014թ. N 13-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 Թ.ՄԱՐՏԻ 31-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 31-ի նիստի հետևյալ **օ ր ա կ ա ր գ ը.**

1.1. Ջերմուկ քաղաքում կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման նպատակով Ջերմուկի Գետափնյա փողոցի N 17 հասցեում գտնվող 2,1 հա մակերեսով արտադրական նշանակության հողամասը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին նվիրաբերելու մասին.

զեկ. Գ. Թաղևոսյան -Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

1.2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Ջերմուկի համայնքի ներկայացուցիչներին հաստատելու մասին.

զեկ. Գ. Թաղևոսյան -Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | բացակա | | |
| Արսենյան Արմինե Արազեղեցիկի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կաղենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | բացակա | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....6.... դեմ-....0.... ձեռնպահ- ...0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2014 մարտի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2014թ. N 14-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ N 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2,1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ** է՝

1. Ջերմուկ քաղաքում կեղտաջրերի մաքրման կայան կառուցելու նպատակով Ջերմուկի Գետափնյա փողոցի N 17 հասցեում գտնվող համայնքային սեփականություն համարվող արտադրական նշանակության հողամասը, մակերեսը՝ 2,1 հա, նվիրաբերության պայմանագրով հանձնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | բացակա | | |
| Արսենյան Արմինե Արազգեղեցիկի | բացակա | | |
| Բազրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Խանամիրյան Բազրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | [signature] | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | բացակա | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6….. դեմ-……0…… ձեռնպահ- …0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2014 մարտի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2014թ. N 15-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 85–Ա որոշմանը համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում առաջադրել Ջերմուկի համայնքի հետևյալ ներկայացուցիչներին.

ա) Ջերմուկի համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Զավենի Մարգարյան,

բ) <<Ջերմուկի երիտասարդական կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Սյուզաննա Թաթուլի Ավետիսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արազգեղեցիկի | | | |
| Բազրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……6…… դեմ-……0…… ձեռնպահ- ….0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2014 մարտի 31
Ջերմուկ